ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի նոյեմբերի 19-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 պայմանագրում 2020 թվականի դեկտեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

1) Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 27.11.2020թ. N 1897-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:
2) Փոփոխության առաջացման պատճառ	Կատարողի բանկային վավերապայմանների փոփոխության անհրաժեշտություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում փոխվել են Կատարողի բանկային վավերապայմանները:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

19.11.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 գնման պայմանագրի

ք. Երևան «18» դեկտեմբերի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վ. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.11.2020թ. N 1897-Ն որոշումը և Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 19.11.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետում ավելացնել նոր 4.1.2 ենթակետ հետևյալ բովանդակությամբ.
<<4.1.2 Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ծառայությունների դիմաց 2020թ. համար վճարման ենթակա գումարը կազմում է **5 000 000 (հինգ միլիոն)** ՀՀ դրամ:>>:

1.1.2 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N 2-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.3 Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում Կատարողի բանկային վավերապայմաններում <<<<Ամերիաբանկ>> ՓԲԸ, Հ/Հ 1570015122250100>> բառերը և թվերը փոխարինել <<<<Էվոկաբանկ>> ՓԲԸ, Հ/Հ 16600057361700>> բառերով և թվերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Երևան, Աբովյան 29 շ., 15 բն.
կառավարական տուն 3	<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 16600057361700
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01553657
Հ/Հ 900011036176	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան	Վ. Սարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
	Կ.Տ.

Հավելված
19.11.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 պայմանագրի
«18» դեկտեմբերի 2020 թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N2
19.11.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/624	Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	5 000 000	5 000 000

>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011036176
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 29 շ., 15 բն.
<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 16600057361700
ՀՎՀՀ 01553657

Տնօրեն՝

Վ. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4.2
ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան «17»դեկտեմբերի 20 20 թ.**

«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Վահան Սարգսյանի /նույն.քարտ 000084525, տրված 11.11.2012թ., 011 կողմից/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ
ք Երևան, Աբովյան 29 շ., 15 բն.

«Էվոկաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 16600057361700
ՀՎՀՀ 01553657.
Վահան Սարգսյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

17.դեկտեմբերի 2020թ.

լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 16600057361700	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 01553657	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900008000664	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 16492000 /տասնվեց միլիոն չորս հարյուր իննսուներկու հազար/	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33**	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ»
«NOM PROJECT»
01553657

evocaBANK

Հավելված N 4
ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N 7330/21
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ (այսուհետ՝ պրիցիպալ) կողմից կնքվելիք N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33** պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 5,000,000.00 (Հինգ միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի՝ 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33** ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ՝ 14/06/2021թ.-ը:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

   Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

№ 7330/01 1660137337
Date 16/12 2020թ.

evocaBANK

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության Նախագահ _____ **Կ. Եղիազարյան**

Գլխավոր հաշվապահ _____ **Է. Ջանինյան**

Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

№ 73301/01 1660137337
Date 16/12 2020թ.

evocaBANK

Բանկային երաշխիք 7329/21
(կանխավճարի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք կամ կնքված N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33** պայմանագրով նախատեսված կանխավճարի տրամադրման շրջանակում պայմանագրով նախատեսված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն, (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) պարտավորվում է բենեֆիցիարի՝ երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) բենեֆիցիարին անվերապահորեն վճարել մինչև 5,000,000.00 (Հինգ միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցելու միջոցով:
3. Երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետկանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխիք տվող անձի կողմից:
4. Երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 14/06/2021թ.-ը:
6. Կանխավճարը փոխանցվում է պրինցիպալի՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ բանկում սպասարկվող թիվ 16600057361700 հաշվարկային հաշվին:
7. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է Երաշխիք տված անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները, կամ
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
8. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
9. Երաշխիք տվող անձի կողմից բենեֆիցիարի պահանջի հիման վրա վճարում կատարելու դեպքում երաշխիքային գումարը նվազում է համապատասխան գումարի չափով:
10. Երաշխիքի գումարը նվազեցվում է բենեֆիցիարի կողմից այդ մասին երաշխիք տվող անձին գրավոր դիմում տալու միջոցով:

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

№ 7329/21 1660137505
Date 16/12 2020թ.

evocaBANK

11. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա երաշխիք տվող անձը երաշխիքով բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով երաշխիքի իր օրինակը:
12. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից երաշխիքի 11-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար՝ երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:
13. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:
14. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է բենեֆիցիարին:
15. Սույնով բենեֆիցիարը համաձայնություն է տալիս այն մասին, որ իր կողմից երաշխիքի բնօրինակը երաշխիք տված անձին վերադարձվելու դեպքում դադարում են երաշխիքից բխող երաշխիք տվող անձի հանդեպ բենեֆիցիարի իրավունքները:
16. Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
17. Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
18. Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքի տրամադրման օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում նշված՝ քարտուղարի (գնումները համակարգողի) էլեկտրոնային փոստի հասցեին:

ՀՀ, «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՌԱՍՄԵՆԻԱ, «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԶԱՕ
ARMENIA, "EVOCABANK" CJSC
evocaBANK
00001182

Վարչության Նախագահ _____ **Կ. Եղիազարյան**

Գլխավոր հաշվապահ _____ **Է. Ջանինյան**

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

№ 7329/21 1660137505
Date 16/12 2020թ.